նրան, նրա այդ համոզմունքը զօրացնում էին, և նա այդ իմաստով գրեր էր փոխանակում Կ. Պոլսի պատրիարքի, վրաց Գէորգ թագաւորի, նրա Դաւիթ ժառանգի, իւր թիֆլիսաբնակ ազգականների և Էջմիածնի միաբանութեան իրեն համախոհ անդամների հետ: Բայց և այնպէս նա չէր ուզում Էջմիածնի միաբանութեան և Գէորգ թագաւորի հրաւէրով մեկնել տեղից, մինչև որ Կ. Պոլսի ժողովուրդն ընտրութիւնը չվաւերացնէ. «Զեմ կամենում», գրում էր նա Կ. Պոլիս, «ընդունել այդ կոչումը թագաւորներից և երևելի իշխաններից, այլ նախ Աստուծուց և ապա բոլոր քրիստոսասէր հայ ազգից, որի ձայնը ձայն Աստուծու հաւատալով, յօժարութեամբ կարող կլինիմ ընդունելու» [1])

Բերաթի երկար յապաղումը Կ. Պոլսից և Դանիէլ պատրիարքի խարդաւանաց լուրերը, որ անձամբ հետամուտ էր հայրապետական Աթոռը բարձրանալու, վրդովում էին Յովսէփին, և նա այդ բոլորին վերջ դնելու համար նամակով ազդարարեց պատրիարքին, թէ ոչ ինքն, ոչ էլ Ռուսիայի և Վրաստանի հայերը մի ուրիշ կաթողիկոս կընճանաչեն. ուստի և խնդրեց այն գժտութիւնների առաջն առնել, որոնք կարող էին ծագել հայ ազգի մէջ: Բացի այդ՝ 23 փետրուարի 1800 ամի նա դիմեց գաղտնի խորհրդական Ս. Լ. Լաչկարևին [2]) և Ղուկաս

---

[1]) «Զեռագիր. Մեք զսոյն կոչումն ոչ կամիմք ընդունել միայն ի թագաւորաց և ի կայսերաց կամ յերևելի իշխանաց և ի մարդկանց, այլ նախ յԱստուծոյ, և ապա ի բոլոր հասարակութենէ հայկազունս, քրիստոսասէր ժողովրդոց, որոց բարի ութեան ձայն՝ ձայն Աստուծոյ հաւատալով կարասցուք յանձն առնուլ յօժար ընդունելութեամբ». Միևնոյն միտքը նա կրկնում է նոյն իսկ փետրուարի 23 ին գրած նամակում. «Մեհեաղունից հրաման յետին համարեցի և համարիմ, զի մի՛ բռնութիւն նովաւ մտցէ ի սուրբ աստիճանն, այլ տեղի նոցա ազգային սովորութեանց, զի ազգն զիս և ես զազգն ընդգրկելոց եմք: Ոչ կամիմ ինքնին կարևոր իշխանութեամբ ն գաստաւորաց մերոց ելանել ի սուրբ գահդ, այլ կամօքն Աստուծոյ և համահաճութեամբ հասարակ զաւակաց սուրբ Մօրն մերոյ, զի բազմասցի և վերակրկնեսցի սէր և խաղաղութիւն առ ամենեսին, որովք և մեք կարասցուք զգենուլ զզօրութիւն ի բարձանց առ ի հովուել զՀօտն Աստուծոյ և կրել զծանրութիւն լծոյն այնորիկոս»

[2]) Արտաքին գործոց Պետական Ցանձնաժողովի Ասիական բաժնի անդամ.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան